Եւ եղեւ ի ժամանակի յայնմիկ հիւանդանալ դաւթի, և մեռանիլ իսկ խաղաղութեամբ ի տան իւրում ի հալի ձոր, յամի տեառն 1728ին, և ի թուին հայոց ՌՃՀԷ. կեցեալ ամս վեց յիշխանութեան իւրում ի խափան (էջ 53)։

59. *Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ հիւանդանալ Դաւթի, և մեռանիլ իսկ խաղաղութեամբ ի տան իւրում ի Հալիձոր, յամի տեառն 1728, և ի թուականութեանն Հայոց 1177, կացեալ ամս վեց յիշխանութեան իւրում ի Խափան (էջ 67-68)։*

Աւելորդ կը համարինք դեռ երկարել համեմատութիւններ. մէջ բերուածները շատ խօսուն են արդէն, և ընթերցողն ինքնին վստահօրէն պիտի հաստատէ թէ անկասկած վենետկեան ձեռագրի մէկ օրինակն է Գուլամիրեանի ձեռքն ընկած պատմական գրուածը։

Կէտ մը կայ սակայն խնդրական՝ որուն ակնարկած ենք յօդուածի սկիզբէն, այսինքն Տէր Աւետիք քահանայի վերաբերեալ հարցը. տեղն է որ հոս քննենք զայն. մանաւանդ անոր համար որ, հակառակ մեր ըսածին և պնդածին, Մխիթարեան աղբիւրներն և Գուլամիրեան հիմնովին կը տարբերին իրարմէ։ Հարց է ուրեմն թէ՝ Հայ ազատագրական շարժման ողբալի քայքայումէն վերջ ինչ եղաւ և ուր գնաց Աւետիք քահանայ՝ մէկը Դաւիթ բէկի քաջ զօրավարներէն։

Մխիթարեան ձեռագիրները համաձայն են ըսելու՝ թէ ան Հռոմ գնաց Ս. Քահանայապետէն ներում խնդրելու իր այնքան թափած արիւնին համար (քանի որ իբրեւ քահանայ խաչի և Աւետարանի պաշտօնեայ էր և ոչ սուրի և հրացանի). իսկ Գուլամիրեանինը զանիկա Երուսաղէմ կը ղրկէ՝ նոյն նպատակով։ Տեսնենք բնագիրները։

Ա. ՁԵՌ. Հ. ՂՈՒԿԱՍԻ

Եւ Տէր Աւէտիսն յայնմիկ ժամանակի փախուցեալ (ժամանակ ինչ թնա) զայ ի գաղատիայ, և անտի (եկեալ ի Վենետիկ) դիմեալ առ սրբազան հայրապետն հռօմայ և անդու զներումն։

Բ. Ձ. ՄԽԻԹ. ՀԱՐՑ

(Տէր Աւետիսն) նա փախուցեալ ի նոցանէ անկաւ առ փաշային, որոյ հրամանաւն առեալ զընտանիս իւր՝ գնաց բնակեցաւ ի գաղատիայ. և էառ զներումն ի սրբազան Հայրապետէն հռօմայ (էջ 55)։

ԳՈՒԼԱՄԻՐ. ՀՐՏ.

(Տէր Աւետիսն) փախուցեալ ի նոցանէ անկաւ առ փաշայն. որոյ հրամանաւ առեալ զընտանիսն գընացեալ բնակեցաւ յԵրուսաղէմ. և յետ բազում ապաշխարանաց էառ զներումն ի Ս. Պատրիարքէն Հայոց, հաճութեամբ և համաձայնութեամբ Տէր Աբրահամ Սրբազնագոյն կաթողիկոսի ամենայն Հայոց (էջ 69-70)։

Մխիթարեան կրկին ձեռագիրներուն համեմատ կը պատմէ նաեւ Ջամչեան՝ Հռոմ ղրկելով Տէր Աւետիքը, աւելցնելով թէ.

«Ըստ որում սովորութիւն էր ազգին՝ յայսպիսի մեծամեծ իրս դիմել ի գահն Հռովմայ». յետոյ ուրի վերջին յաւելուած մ'ալ քէ «և յետ կալոյ Նորա զժամանակ ինչ յայնոսիկ կողմանս՝ դարձաւ անդրէն յարեւելս, և անդ վախճանեցաւ [1]»։

Գուլամիրեան սոյն կէտի մասին ծանօթագրելով՝ զարմանք կը յայտնէ Ջամչեանի տողերուն (իրեն անծանօթ ըլլալով Մխիթարեան ձեռագիրները) բոլորովին տարբեր գտնելով զանոնք իր առջեւ ունեցած ձեռագրէն.

«Զարմանամք թէ Հայր Միքայէլ վարդապետն Ջամչեանց... ուստի՞ գիտացեալ՝ կամ յո՞րպիսի աղբերաց առեալ՝ վստահանայ ինքնաստեղծ պատմութեամբ յօրինել զնոր իմն սովորութիւն Ազգիս, գրելով» եւն։

Յետոյ կ'աւելցնէ՝ թէ ո՛չ մէկ հայ կամ օտար պատմիչ նման սովորութիւն մը չէ աւանդած. այլ թէ աւանդութիւն էր վիճակաւորին դիմել և անոր միջնորդութեամբ կաթողիկոսին կամ Երուսաղէմի Պատրիարքին։

Րաֆֆի ալ իր կարգին կը կրկնէ Գուլամիրեանի ըսածները, դժբախտաբար թըթու և անարդար յարձակում մը գործելով Ջամչեանի վրայ, ինչպէս նաեւ Աւե-

---

1. Պատմ. Հայոց. Գ. գիրք Ձ. գլ. ԽԹ, էջ 800։